17 հունվարի 2013 թվականի N 23 - Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2-Ի N 959-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ

Մ Ա Ս Ի Ն

Հայաստանի Հանրապետության վարչապետի 2012 թվականի հոկտեմբերի 2-ի «Գնումների ոլորտում առկա խնդիրների նվազեցմանն ուղղված բարեփոխումների միջոցառումների ցանկը հաստատելու մասին» N 959-Ն որոշման հավելվածի 4-րդ և 5-րդ կետերը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

<<

4.	Շրջանակային համաձայնագրերով գնումների իրականացում էլեկտրոնային գնումների ARMEPS համակարգի միջոցով	Պետական պատվիրատուների կողմից շրջանակային համաձայնագրերով գնումները կիրականացվեն բացառապես էլեկտրոնային գնումների ARMEPS համակարգի միջոցով:	պետական կառավարման մարմիններ	2013 թ. մարտի 1

5.	Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի կողմից հաստատված ցանկում ներառված հանրային կազմակերպությունների գնումների լրացուցիչ պահանջների (առանձնահատկությունների) սահմանում և այդ կազմակերպությունների կողմից իրականացվող գնումների մոնիթորինգի կարգի հաստատում և մոնիթորինգի իրականացում	1. Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի կողմից հաստատված ցանկում ներառված հանրային կազմակերպությունների գնումների լրացուցիչ պահանջների (առանձնահատկությունների) սահմանում, որը կնկարագրի գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված պահանջներից տարբերվող հանրային կազմակերպությունների գնումների լրացուցիչ պահանջները (առանձնահատկությունները):	հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով (համաձայնությամբ)	2013 թ. մարտի 31
		2. Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի կողմից հաստատված ցանկում ներառված հանրային կազմակերպությունների գնումների գործընթացի մոնիթորինգի կարգ, որը կնկարագրի մոնիթորինգի մեխանիզմներն ու գործիքները, իրականացման և հրապարակման պարբերականությունն ու ձևաչափը:		2013 թ. հունիսի 30

>>:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ